Լիա Ս.Էվոյան

ԹՈՒՐՔԻԱ-ԱԴՐԲԵՋԱՆ-ՎՐԱՍՏԱՆ

Ռազմաքաղաքական դաշինքի ձևավորման միտումները*

Մուտք

ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական զարգացումները հիմնականում ընթանում էին Արևմուտք - Ռուսաստան պայքարի համատեքստում, ինչի արդյունքում աստիճանաբար առավել շահեկան դիրքերում հայտնվեց Ադրբեջանում և Վրաստանում իր ազդեցության լծակներն ամրապնդող Արևմուտքը:

Տարածաշրջանն իրենց կենսական շահերի գոտի հայտարարած Միացյալ Նահանգները դեռևս 1998 թ. հոկտեմբերին Հարավային Կովկասի երկրներն ընդգրկեցին ԱՄՆ եվրոպական հրամանատարության (USEVCOM) պատասխանատվության գոտում[1]: ԱՄՆ-ի ծրագրերում Հարավային Կովկասում ուրույն դերակատարում ուներ Թուրքիան՝ որպես աշխարհաքաղաքական կենտրոն ու Կովկասում Ռուսաստանին հակակշռող ՆԱՏՕ-ի «հարավային խարիսխ»[2]: Ուստի ԱՄՆ-ը աջակցում էր Թուրքիային՝ ուժեղացնելու իր դիրքերը հետխորհրդային պետություններում, նախ Ադրբեջանում, ապա Վրաստանում[3]:

2002 թ. Թուրքիայում «Արդարություն և զարգացում կուսակցության» (“Adalet ve Kalkınma Partisi”, AKP) իշխանության գալուց հետո պետության արտաքին քաղաքական ուղեգծի հիմքում դրվեց նեոօսմանյան գաղափարախոսությունը, որի սկզբունքները շարադրված են ԱԳ նախարար Ա. Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» (“Stratejik derinlik”) աշխատությունում: 2002 թ. հետո Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականությունը պետք է դիտարկել այս հայեցակարգի շրջանակներում, որի հիմքում տարածաշրջանային գերտերության գաղափարն է, հիմնված երկու բաղադրիչների՝ Թուրքիայի պատմամշակութային

*Հաշվի առնելով հոդվածում քննության ենթարկվող հիմնախնդրի կարևորությունը Հայաստանի ճակատագրի համար, հանդեսը բացառություն է արել ընթացիկ բնույթի քաղաքագիտական հետազոտություններ հրապարակելուց խուսափելու սկզբունքից: Խմբ.: Ընդունվել է տպագրության 24.08.2012:

1 Տե՛ս **Igor Dobaev,** Alexander Dugin, “ Geopolitical Transformations in the Caucasian-Caspian Region”, Central Asia and The Caucasus, CA&CC Press: Sweden, N 5(35), 2005, 74.

2 **Zbigniew Brzezinski,** The Grand Chessboard: American Primacy And Its Geostrategic Imperatives, 1998, p. 47.

3 Տե՛ս **В.Гусейнов,** Каспийская нефть. Экономика и геополитика, М., 2002.

ժառանգության և նրա աշխարհագրական դիրքի վրա[4]: Համաձայն այդ հայեցակարգի՝ Թուրքիան իր իդեալական աշխարհագրական դիրքի շնորհիվ ունի առանձնահատուկ՝ «կենտրոնական ուժի» կարգավիճակ, ուստիև չպիտի վարի պաշտպանական արտաքին քաղաքականություն[5], այլ ունենա նախաձեռնող, ակտիվ, բազմավեկտոր, կառուցողական դիվանագիտության ռազմավարություն[6], ինչի արդյունքում նա պետք է դառնա տարածաշրջանային գերտերություն:

Սակայն Թուրքիայի կողմից նոր արտաքին քաղաքական հայեցակարգի որդեգրումը ոչ այնքան ռազմավարական, որքան մարտավարական փոփոխություն էր, որը պայմանավորված էր աշխարհակառուցման նոր գործընթացներում իր համապատասխան տեղը զբաղեցնելու, աշխարհաքաղաքական վերաձևավորումներին համահունչ լինելու անհրաժեշտությամբ: Ռազմաստրատեգիական, ռազմաքաղաքական և տնտեսաքաղաքական տեսանկյունից Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղեգիծը գործնականում շարունակում է մնալ գրեթե անփոփոխ՝ ենթարկվելով ժամանակակից «խաղի կանոններին» համապատասխանող մարտավարական և հայեցակարգային ձևափոխումների:

Դրան նպաստում է այն իրողությունը, որ 2008 թ. վրաց-օսական, ապա վրաց-ռուսական «Հնգօրյա պատերազմի» արդյունքում Թբիլիսի-Մոսկվա դիվանագիտական հարաբերությունների խզումով ստեղծվել է մի իրավիճակ, երբ Վրաստանն այլևս կասեցնում է տարածաշրջանում ՌԴ տեղաշարժը՝ նպաստելով Թուրքիայի առաջխաղացմանը Հարավային Կովկասում: Իսկ Ա. Դավութօղլուի «Ռազմավարական խորություններում» Ադրբեջանը նշվում է որպես Թուրքիայի կարևորագույն դաշնակից Կասպից ծովի ավազանում, Կովկասում ու Միջին Ասիայում, քանզի «Թուրքիան ի վիճակի չի լինի ընդլայնել իր ազդեցության ոլորտը Կասպից ծովի տարածաշրջանում, քանի դեռ Ադրբեջանը ձեռք չի բերել ուժեղ և հաստատուն տարածաշրջանային դիրք»[7]: Միևնույն ժամանակ Դավութօղլուն «…հայ-ադրբեջանական պատերազմի արդյունքում Ադրբեջանի տարածքի մի մասի գրավումը…»[8] համարում է Թուրքիայի ամենամեծ ռազմավարական պարտությունը:

Այսպիսով, Թուրքիայի արտաքին քաղաքական հայեցակարգում ամրագրված է Ադրբեջանի հետ հարաբերությունների զարգացման ռազմավարական նշանակությունը:

1. Թուրքիայի շահերն Ադրբեջանում

Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունները կայուն ու դինամիկ զարգացում արձանագրեցին Ադրբեջանի Ժողովրդական ճակատի առաջնորդ, պանթուրքիստ Ա. Էլչիբեյի նախագահության օրոք (1992-1993 թթ.), երբ դրանք ավելի շուտ

4 Տե՛ս **Ahmet Davudoglu,** "Turkey`s Foreign Policy Vision: An Assessment of 2007", "Insight Turkey", vol. 10. N 1, 2008. p.79.
5 Տե՛ս **Ahmet Davutoglu,** "Turkey`s Foreign Policy Vision: An Assessment of 2007", "Insight Turkey", vol. 10, N 1, 2008, p.78.
6 Տե՛ս **J. Valiyev,** " Where is Azerbaijan positioned in Strategic Depth?", Center for Strategic Studies under the President of Republic of Azerbaijan, October-December 2010, p. 118.
7 Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik, Küre Yayınları, İstanbul 2009, Sayı 34, s.127.
8 Ibid, p. 127.

գաղափարական ուղղվածություն ունեին, իսկ Հ. Ալիևի իշխանության տարիներին ստացան ինստիտուցիոնալ բնույթ՝ տեղավորվելով «Մեկ ազգ-երկու պետություն» բանաձևի շրջանակներում: 2002 թվականից հետո Ադրբեջանի նկատմամբ Թուրքիայի քաղաքական ռազմավարությունը գործնականում մնաց անփոփոխ՝ հիմնավորվելով իշխող ուժի որդեգրած նոր հայեցակարգում: Դա է վկայում 1992-2010 թթ. Թուրքիայի և Ադրբեջանի միջև ստորագրված քաղաքական, ռազմական, տնտեսական և հումանիտար ոլորտներում փոխադարձ համագործակցության ընդլայնմանն ուղղված ավելի քան 137 միջպետական համաձայնագրերի, արձանագրությունների և այլ իրավական փաստաթղթերի ողջ տրամաբանությունը[9]: Այս առումով առավել ուշագրավ են անվտանգության ոլորտին վերաբերող հետևյալ վավերագրերը[10].

-Համաձայնագիր Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև փոխադարձ ռազմական ուսուցման մասին, 1992,

-Արձանագրություն Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև՝ Զինված ուժերին աջակցող ծառայության աշխատակազմի անդամների համագործակցության մասին, Բաքու, 31 հոկտեմբերի, 1996 (գաղտնի),

-Համաձայնագիր Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև՝ տեխնիկական և գիտական ոլորտներում ռազմական ուսուցման համագործակցության մասին, Անկարա, 10 հունիսի, 1996 (գաղտնի),

-Համաձայնագիր Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև ռազմարդյունաբերության ոլորտում համագործակցության մասին, Բաքու, 20 սեպտեմբերի, 2000,

-Արձանագրություն Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև՝ Թուրքիայի Զինված ուժերի կողմից Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայության վերապատրաստման, նյութական և տեխնիկական օժանդակության մասին, 29 օգոստոսի, 2003,

-Արձանագրություն Ադրբեջանի Հանրապետության Պաշտպանության նախարարության և Թուրքիայի Հանրապետության Գլխավոր շտաբի միջև ռազմական հետախուզության ոլորտում համագործակցության մասին, Անկարա, 3 մարտի, 2003,

-Համաձայնագիր Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև երկարաժամկետ տնտեսական և ռազմական համագործակցության մասին, Անկարա, 13 ապրիլի, 2004,

-Արձանագրություն Ադրբեջանի Հանրապետության Պաշտպանության նախարարությանը Թուրքիայի Զինված ուժերի գլխավոր շտաբի կողմից ֆինանսական օժանդակության մասին, 1999 - 2007:

Վերոնշյալ իրավական փաստաթղթերը և 2008 թ. հետո տարածաշրջանում

9 Թուրքիայի և Ադրբեջանի միջև կնքված բոլոր իրավական փաստաթղթերը, ինչպես նաև երկկողմ հարաբերություններ՝ առհասարակ, հիմնված են 1921 թ. Կարսի պայմանագրի դրույթների վրա: Տե՛ս Ադրբեջանի ԱԳՆ պաշտոնական կայքը, www.mfa.gov.az

10 Վերոբերյալ փաստաթղթերը տեղակայված են Ադրբեջանի ԱԳՆ պաշտոնական կայքում, www.mfa.gov.az.

ստեղծված աշխարհաքաղաքական բարենպաստ իրավիճակը հիմք հանդիսացան Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքի իրավական ձևակերպման համար: Ուստի 2010 թ. օգոստոսի 16-ին Բաքվում Թուրքիայի և Ադրբեջանի նախագահների կողմից ստորագրվեց և ապա 2011 թ. դեկտեմբերի 21-ին Ադրբեջանի խորհրդարանի կողմից վավերացվեց «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագիր, որն ամրագրեց երկկողմ բարձր մակարդակի հարաբերությունների հետագա դինամիկան բոլոր հնարավոր ոլորտներում:

2. Թուրքիայի շահերը Վրաստանում

Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների համատեքստում Վրաստանը դիտվում է որպես տարանցիկ երկիր, որի տարածքը ծառայում է իբրև միջանցք դեպի Ադրբեջան և միջինասիական երկրներ, ինչը կարևորվում է հատկապես Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան փակ սահմանների պարագայում:

Այս առումով առանձնահատուկ ռազմավարական նշանակություն ունի Վրաստանի հայաբնակ Սամցխե-Ջավախեթիի վարչական շրջանը, որտեղ Թուրքիան վարում է ժողովրդագրական պատկերի փոփոխությանը նպատակաուղղված քաղաքականություն՝ աջակցելով 1944-ից տեղահանված թուրք-մեսխեների (Ahıska Turkleri) «հայրենադարձությանը»: Հատկանշական է, որ դեռևս 1999 թ. ԵԽ անդամակցելու ժամանակ նման պարտավորություն ստանձնած Վրաստանը առաջարկում է թուրք-մեսխեներին վերաբնակեցնել երկրի ողջ տարածքում, սակայն Թուրքիան հատկապես պնդում է Սամցխե-Ջավախեթիի վարչական շրջանում նրանց հաստատվելու անհրաժեշտությունը: Ջավախքում թուրք-մեսխեների զանգվածային բնակեցման ու մեծամասնություն կազմելու հեռանկարը կհանգեցնի ամբողջական թյուրքական միջանցքի ստեղծմանը: Պատճառն ակնհայտ է. դրանով Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլի (Ադրբեջանին սահմանակից, հիմնականում ադրբեջանաբնակ տարածք) վարչական շրջանները **զուգահեռ գծով** կմիացնեն միմյանց Ադրբեջանն ու Թուրքիան[11] միաժամանակ հատելով Հայաստանը հյուսիսին կապող **ուղղահայացը**:

Տնտեսության ոլորտում Թուրքիան ներկայումս համարվում է Վրաստանի առաջին գործընկերը՝ զբաղեցնելով Ռուսաստանի երբեմնի տեղը: 2002-2010 թթ. երկկողմ առևտրաշրջանառության ծավալը նշանակալի աճ է արձանագրել՝ 240 միլիոնից հասնելով մինչև 1 մլրդ. դոլարի[12]: Բացի այդ, Թուրքիան իր ներդրումներով Վրաստանում գրավում է երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո: Թուրքական ներդրումները ներառում են շինարարական (այդ թվում՝ օդանավակայանի թերմինալների վերանորոգումը) և հեռահաղորդակցության ոլորտները, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի տարատեսակ կազմակերպությունների ստեղծումը Վրաստանում: Այս պահին ամենամեծ ներդրումը կատարված է Կարս-Թբիլիսի երկաթգծի և Ռիզե-Փոթի օպտիկամանրաթելային մալուխի նախագծերի իրականացման վրա[13]: Բացի այդ՝ Թուրքիան պատրաստվում է մի շարք էլիտար արվարձանային

11 Տե՛ս **էդուարդ Աբրահամյան,** Վրաստանի ադրբեջանցիները. ակտիվ նախապատրաստություն սպասված ապստամբությանը, www.armtown.com

12 Տե՛ս Dış Ticaret İstatistikleri, Türkiye İstatistik Kurumu, www.tuik.gov.tr

13 Տե՛ս **Justyna Glogowska,** Turkey and Georgia: Strategic Connections, BilGESAM, 23 March 2012.

ավաններ կառուցել հենց մայրաքաղաք Թբիլիսիի շուրջ[14]:

Ռազմական ոլորտում Թուրքիան Վրաստանի, ինչպես նաև Ադրբեջանի ռազմամթերքի հիմնական մատակարարն է և ունի ռազմական օբյեկտներ ու ներկայություն երկու պետություններում: Կրթական ոլորտում թուրք գործարարների աջակցությամբ Վրաստանում գործում են մի քանի ավագ դպրոցներ, իսկ Քվեմո Քարթլիի շրջանում՝ մեկ մասնավոր համալսարան: Ամեն տարի Վրաստանի քաղաքացի բազմաթիվ վրացի և ադրբեջանցի ուսանողներ կրթաթոշակ են ստանում Թուրքիայի կառավարության կողմից՝ թուրքերեն սովորելու և Թուրքիայում վերապատրաստվելու համար: Նշենք, որ սա բավականին լուրջ գործոն է Վրաստանում Թուրքիայի ազդեցության հզորացման համար:

Վրաստանում իր շահերն ունի նաև Ադրբեջանը: Ադրբեջան - Վրաստան հարաբերություններում առանցքային դեր է խաղում միմյանց տարածքային ամբողջականության ճանաչման սկզբունքի վրա հիմնված փոխադարձ շահը: Վրաստանին և Ադրբեջանին միավորում է նաև անդամակցությունը ԱՊՀ-ին իբրև այլընտրանք ստեղծված ՎՈՒԱՄ քաղաքական միավորմանը[15]:

Միաժամանակ՝ Բաքուն Վրաստանում իր ազդեցության լծակներն ամրապնդելու և ընդլայնելու հստակ քաղաքականություն է վարում՝ օգտագործելով տնտեսության որոշակի ոլորտներում, մասնավորապես էներգետիկայի բնագավառում Թբիլիսիի համար անայլընտրանք համագործակցության իրողությունը:

Նույն նպատակին է ծառայում նաև Վրաստանի ազգային փոքրամասնությունների շարքում իր քանակով առաջինը համարվող ադրբեջանական համայնքը, մասնավորապես ադրբեջանաբնակ Քվեմո-Քարթլիի (Բորչալու) տարածաշրջանը, որը ստանում է նաև Թուրքիայի աջակցությունը: Հարկ է նշել, որ արևելքից Ադրբեջանին, հարավից Հայաստանին, արևմուտքից Ջավախքին սահմանակից և հյուսիսից Վրաստանի մայրաքաղաքին կից Քվեմո-Քարթլիի տարածաշրջանի ադրբեջանցիներն այն հռչակում են «հերոս թուրքերի հայրենիք» և համարում են «վիճելի տարածք Ադրբեջանի և Վրաստանի միջև», որը «անարդարացիորեն ԽՍՀՄ օրոք տրվեց Վրաստանին»[16]: Այս առումով ուշագրավ է Բորչալուի ադրբեջանական համայնքի կայքէջում պարբերաբար հանդիպող «Բորչալուն Ադրբեջանից ամենակարճ ճանապարհն է դեպի Թուրքիա» արտահայտությունը[17]:

Հատկանշական է, որ Վրաստանի տնտեսական զարգացման նախարարության վիճակագրության դեպարտամենտի 2008 թվականին կատարած հետազոտությունների տվյալներով մանր ձեռնարկությունների դրամաշրջանառության ծավալներով Թբիլիսիից հետո առաջատարը Քվեմո Քարթլիի տարածաշրջանն է, որին բաժին է ընկնում տվյալ ոլորտի դրամաշրջանառության 13 տոկոսը[18]: Քվեմո Քարթլիի մասնավոր, այսինքն՝ հիմնականում ադրբեջանական ձեռնարկությունների աջակցությունն իրականացվում է Բաքվից ֆինանսավորվող ադրբեջանական հասարակական կազմակերպությունների միջոցով: Միաժամանակ, թուրք գործարարների աջակցությամբ կրթության ոլորտում Վրաստանում

14 Տե՛ս Турки будут строить мини-города около Тбилиси, 02.09.2011, www.georgiatimes.info
15 Տե՛ս **Сергей Маркедонов,** Соседи Грузии: до и после «Пятидневной войны¦, 22.08.2008, http://www.politcom.ru
16 www.borchali.net
17 Ibid.
18 Տե՛ս http://www.apsny.ge/news/1214000731.php

գործում են մի քանի ավագ դպրոցներ, իսկ Քվեմո Քարթլիի տարածաշրջանում՝ մեկ մասնավոր համալսարան:

Ըստ Կարսի պայմանագրի 6-րդ հոդվածի, որը վավերացվել է նորանկախ Վրաստանի կառավարության կողմից, Թուրքիան առանձնահատուկ կարգավիճակ ունի Աջարիայի ինքնավարությունում՝ որպես նախկին թուրքական տարածք ու մուսուլմանական բնակչություն ունեցող շրջան[19]: Ներկայումս մեծ արագությամբ Թուրքիան իրագործում է այդ շրջանում տնտեսապես իշխելու և ժողովրդագրական իրավիճակը փոփոխելու քաղաքականություն՝ օգտագործելով նաև կրոնական գործոնը:

3. Ու՞ր է տանում այս ամենը

Փորձենք հասկանալ, թե որոնք են Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան եռակողմ հարաբերությունները ռազմաքաղաքական ու ռազմավարական դաշինքի վերածվելու գլխավոր նախադրյալները:

Առաջին նախադրյալը Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան ռազմական համագործակցությունն է. Թուրքիան հանդիսանում է Վրաստանի, ինչպես նաև՝ Ադրբեջանի ռազմամթերքի հիմնական մատակարարը և ունի ռազմական օբյեկտներ ու ներկայություն երկու պետություններում[20]: Վրաստանի և Ադրբեջանի կողմից Թուրքիայի հետ դաշինքը նաև դիտարկվում է իբրև ևս մեկ քայլ ՆԱՏՕ-ին անդամակցելու ճանապարհին[21]: Ադրբեջանում և Վրաստանում հասարակական կարծիքը նախապատրաստվել է ՆԱՏՕ-ին անդամակցելուն, իսկ Ադրբեջանի տարածքում՝ երկրի ինքնիշխանությունն ու անկախությունը պաշտպանելու նպատակով ամերիկյան ու թուրքական ռազմական ներկայության հնարավոր հեռանկարին[22]:

Երկրորդ նախադրյալը համագործակցությունն է էներգետիկ ոլորտում. ռազմավարական նշանակության Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարը կապում է Կասպից ծովը Միջերկրական ծովին, իսկ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի շուրջ համագործակցությունը հանգուցում է երեք երկրներին: 2010 թ. Ադրբեջանի ու Վրաստանի իշխանությունները որոշում կայացրին երկու երկրների միասնական էներգահամակարգ ստեղծելու մասին[23]: 2012 թ. հունիսի 26-ին Թուրքիայի և Ադրբեջանի էներգետիկայի նախարարները ստորագրեցին 7-8 մլրդ արժեցող Տրանսանատոլիական (TANAP) նոր գազատարի կառուցման վերաբերյալ համաձայնագիր, որը ենթադրում է ադրբեջանական գազը թուրք-վրացական սահմանով արտահանել Եվրոպա:

Այստեղ հարկ է վերհիշել երկու ուշագրավ փաստ՝ վերջնական եզրակացության գալու համար:

Ինչպես հայտնի է, ժամանակին Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցման

19 Տե՛ս Kars Muahedenamesi, Kars, 1921.
20 Տե՛ս **Gayane Novikova,** “Quid Pro Quo in Turkey’s South Caucasus Policies”, Turkish Policy Quarterly, Vol. 10. N1, 2010, www.turkishpolicy.com
21 Տե՛ս **Gayane Novikova,** “Quid Pro Quo in Turkey’s South Caucasus Policies”, Turkish Policy Quarterly, Vol. 10. N1, 2010, www.turkishpolicy.com
22 Տե՛ս **В.Гусейнов,** Каспийская нефть. Экономика и геополитика, М., 2002.
23 Տե՛ս **Gayane Novikova,** “Quid Pro Quo in Turkey’s South Caucasus Policies”, Turkish Policy Quarterly, Vol. 10. N1, 2010, www.turkishpolicy.com

համար նախապայման էր դրվել տարածաշրջանում, առավելապես Վրաստանում գործող ՌԴ չորս ռազմակայանները լուծարելու պահանջը: 1999 թ. նոյեմբերին, Ստամբուլում՝ ԵԱՀԿ գագաթաժողովում, Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքվեց համապատասխան համաձայնագիր, և կարճ ժամկետներում ՌԴ ռազմակայանները դուրս բերվեցին Վրաստանի տարածքից: Այնուհետև, 2001 թ. սեպտեմբերի 9-11-ին Չոլպոն Աթայում (Ղրղզստան) կայացած թյուրքալեզու պետությունների հատուկ ծառայությունների 4-րդ համաժողովի ստեղծած Համակարգող խորհրդի առջև խնդիր դրվեց իրականացնել Աքտաու-Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի ու ՏՐԱՍԵԿԱ նախագծերի անվտանգության ապահովման շուրջ համագործակցություն ընդդեմ ահաբեկչության[24]:

Հաջորդ իրողությունը տարածաշրջանային անվտանգության համատեղ համակարգի ձևավորման փորձն էր, ինչի իրականացմանը պետք է ծառայեր ՎՈՒԱՄ միավորումը: Սակայն, ՎՈՒԱՄ-ը, հետագայում ընթացավ ԱՊՀ անդամ, բայց ՀԱՊԿ-ին չանդամակցող երկրների ռազմաքաղաքական համագործակցությանը ձգտող միավորման ստեղծման ճանապարհով:

Եվ վերջապես՝ վերոբերյալ շահերով ու գործընթացներով է պայմանավորված 2012 թ. հունիսի 8-ին Տրապիզոնում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների կողմից ստորագրված հռչակագիրը՝ "Trabzon declaration" անունը կրող փաստաթուղթը, որն ավելի մանրամասն քննության կարիք է զգում:

Տրապիզոնի հռչակագիրը, հիմնվելով ինքնիշխանության և տարածքային ամբողջականության, հակամարտությունների խաղաղ կարգավորման, միջազգայնորեն ճանաչված սահմանների անձեռնմխելիության, ինքնիշխան պետությունների հավասարության, պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ սպառնալիքից կամ ուժի կիրառումից ձեռնպահության սկզբունքների վրա, հաստատագրել է հետևյալ հիմնական դրույթները[25]:

Նախ՝ կողմերը պարտավորվել են շարունակել միջազգային կազմակերպություններում միմյանց թեկնածություններին աջակցելու քաղաքականությունը… և հետագայում ընդլայնել գոյություն ունեցող մեխանիզմներով խորհրդակցական համագործակցությունը՝ ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԽ, ՍԾՏՀ, ՆԱՏՕ, ԵՄ և այլ կազմակերպությունների շրջանակներում:

Երկրորդ՝ մատնանշվում է Ադրբեջանի Հանրապետության՝ Լեռնային Ղարաբաղի և ԼՂ-ին հարակից տարածքների շուրջ հակամարտության, ինչպես նաև Վրաստանի Աբխազիա և Ցխինվալի (Հարավային Օսիա) տարածաշրջանների շուրջ հակամարտության հնարավորինս արագ կարգավորման կարևորությունը՝ հիմք ընդունելով ինքնիշխանության, տարածքային ամբողջականության սկզբունքները և Ադրբեջանի ու Վրաստանի միջազգայնորեն ճանաչված սահմանները, պահանջելով փախստականների, ինչպես նաև ներքին տեղահանված անձանց ապահով և արժանապատիվ վերադարձն իրենց ծննդավայրերը[26]:

Երրորդ՝ աջակցություն է հայտնվում ՏՐԱՍԵԿԱ-ի (Եվրոպա-Կովկաս-Ասիա

---

24 Տե՛ս **В.Гусейнов,** Каспийская нефть. Экономика и геополитика, М., 2002.

25 Տե՛ս Trabzon Declaration,Trabzon, 8 June 2012, www.mfa.gov.az, www.mfa.gov.tr, www.mfa.gov.ge

26 Այս կետով մատնանշում են ոչ միայն «ԼՂ-ից և նրա հարակից շրջաններից», այլև ՀՀ-ից «ներքին տեղահանված անձինք»: Այսինքն՝ սրանով Վրաստանի կառավարությունը փաստորեն իր աջակցությունն է հայտնում ոչ միայն ԼՂՀ-ի վերագրավման, այլև Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի փոփոխության՝ թուրք-ադրբեջանական ծրագրերին:

տրանսպորտային միջանցք), Մետաքսի Մեծ ճանապարհի ու Եվրասիական տրանսպորտային միջանցքի, ինչպես նաև՝ եռակողմ տրանսպորտային այլ ծրագրերի լայնամասշտաբ գործունեության վերականգնման աշխատանքներին՝ կարևորելով նախատեսված ժամկետում Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղային նախագծի ավարտը, որը Աքթաու (Ղազախստան) - Ուրումչի (Չինաստանի Սինցզյան-ույղուրական ինքնավար մարզ) երկաթգծի հետ միասին կկազմի «21րդ դարի Երկաթե Մետաքսի ճանապարհը»[27]:

Չորրորդ՝ հաստատելով Բաքվի Միջազգային ծովային առևտրային նոր նավահանգստի կառուցման նախագիծը, որը Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու ավարտից հետո կդառնա Արևելք-Արևմուտք Տրանսպորտային միջանցքի օղակ, կարևորվում է Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա համագործակցությունը՝ էներգետիկ պաշարները Ադրբեջանից և Կենտրոնական Ասիայի պետություններից միջազգային շուկա տեղափոխող նոր խողովակաշարային նախագծերի իրագործման նպատակով:

Հարկ է նաև նշել, որ կողմերի համատեղ փորձագիտական խումբը սկսել է 2013-2015 թթ. գործունեության ծրագրի մշակումը[28]: Երեք երկրների ԱԳ նախարարների եռակողմ հանդիպման երկրորդ նիստը տեղի է ունենալու 2012 թ. երկրորդ կեսին Վրաստանում, իսկ երրորդ նիստը՝ 2013 թ. առաջին կեսին Ադրբեջանում[29]:

Եզրակացություններ

Վերջում հարկ է արձանագրել, որ.

ա) Հարավային Կովկասում ներկայումս իրագործվում է Թուրքիայի, Ադրբեջանի ու Վրաստանի միջև քաղաքական և տնտեսական ենթակառուցվածքներ, վերահսկման լծակներ ու մեխանիզմներ ստեղծելու աստիճանական, բայց նպատակաուղղված քաղաքականություն,

բ) այդ ամենի արդյունքում արդեն սկսել է ծավալվել Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան ռազմաքաղաքական դաշինքի ձևավորման գործընթացը, ինչն իրագործելու դեպքում Հայաստանը կհայտնվի եռակողմ շրջափակման մեջ:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը, կարելի է կատարել հետևյալ նախնական եզրակացությունը. **ընթացիկ գործընթացները խորանալու արդյունքում՝ ի դեմս Վրաստանի, Հայաստանն արդեն կանխատեսելի հեռանկարում կարող է տեսնել իր հակառակորդների դաշնակցին**:

Հետևությունը պարզ է. Վրաստանում Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքի դիրքերի ամրապնդումն աստիճանաբար փոխակերպվելով ռազմաքաղաքական դաշինքի ձևավորման գործընթացի, ուժերի նոր հարաբերակցություն է ստեղծում Հարավային Կովկասում, ինչը Հայաստանի Հանրապետության համար օրակարգային խնդիր է դարձնում ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունում լուրջ հստակեցումների ու շտկումների իրականացման անհրաժեշտությունը:

27 Տե՛ս Trabzon Declaration,Trabzon, 8 June 2012, www.mfa.gov.az, www.mfa.gov.tr, www.mfa.gov.ge
28 Տե՛ս Trabzon Declaration,Trabzon, 8 June 2012, www.mfa.gov.az, www.mfa.gov.tr, www.mfa.gov.ge
29 Ibid.

Summary

TURKEY-AZERBAIJAN-GEORGIA
The tendencies of military and political alliance's formation

Lia S. Evoyan

This article is an attempt to shed light on the current political developments in the South Caucasus in general and Turkey-Azerbaijan-Georgia political triangle in particular. It analyzes the existent distribution of power and its future tendency in the region. In this context Turkey-Azerbaijan military-political strategic partnership is discussed with its political and ideological background. In addition, the policy of Turkey-Azerbaijan alliance towards the integration of Georgia to their military-political bloc is examined. Finally the article discusses Georgia's possible role in the current regional developments and states its possible political outcomes for the Republic of Armenia.

The article is written based on the examination of the dynamics of the regional and international political developments, including the last official statements and agreements between Turkey, Azerbaijan and Georgia.